

ռանգութեան սրբոցն ի լոյս. զորոց զպատուականութիւնն սաղմոսերգուն գոչէ ասելով. *Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց*^ա: 14 Ահա եւ ճգնասերն Գրիգորիոս վարդապետն ձեր կոչէ զձեզ յերկնային քաղաքն Երուսաղէմ¹, յամենատենչ եւ յանուշահոտ² ընթրիսն Զրիստոսի, ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք»:

15 Բազում եւ այլ բանիւք հոգեղինաւք եւ շնորհաւք վարդապետութեամբք քաջալերեր զհւրաքանչիւր ոք ի մեծամեծ աւագանւոյն Հայոց սուրբն Ղեւոնդ, հանդերձ երանելեան Յովսէփաւ. որ թեպէտ եւ զձեռնադրութիւն երիցութեան ունէր՝ սակայն յաթոռ կաթողիկոսութեանն էր վիճակեալ արժանաւորապէս: 16 Որոց խրատեալ եւ զաւրացուցեալ հոգեւոր բանիւք զամենայն գիշերն՝ լինէր ամենայն մարդ ի կամաւոր լսողացն վառեալ, որպէս աներկիւղ ամրութեամբ, սուրբ Հոգւոյն զինու: 17 Որք զաւրինադրեալ ժամս գիշերոյն³ կարծէին երկայնագոյն քան զայլ գիշերացն, եւ⁴ տեսանել զառաւաւտ փրկութեանն բաղձային, որպէս զի հասեալք արբքն զբաժակ արքայութեանն երկնից:

18 Որոց աստուածաշնորհ բանից եւ մարտիրոսայորդոր վարդապետութեան հրեշտականման⁵ տեառն Յովսէփայ եւ Ղեւոնդի մտադիւրութեամբ լուեալ երանելոյն⁶ Վարդանայ տեառն Մամիկոնեից՝ տայր պատասխանի, թէ «Սուր քահանայից եկեղեցւոյ պատիւ ձեռնադրութեան ոչ է ի մարդկանէ, այլ ի սուրբ Հոգւոյն յաջորդեալ շնորհէ. նոյնպէս եւ բանք սոցա զամենայն առողջ խորհուրդս լսողացն ի յերկնս հայեցուցանէ. որպէս եւ այժմ իսկ զամենայն գիշերս անհանգիստ ձայնիւ յորդորէին զամենեսեան⁷ յերկնաւոր ընթրիսն, յիշեցուցանելով մեզ զչարչարանսն սրբոյն Գրիգորի. յորոց բազումք որ աստ կամք, ոչ միայն աշակերտք, այլ ազգախառնութեամբ եմք հաղորդեալք: 19 Փութասցո՛ւք ժամանել ի հարսանիսն Զրիստոսի եւ ի հրաւիրակսն, ի գունդ սուրբ առաքելոցն, եւ յընթրատուն Զրիստոս, որ բացեալ զդուռն արքայութեանն՝ սպասէ ընդունել զամենեսեան եւ ուրախ առնել. որոյ ուրախութիւնն մշտնջենաւոր է եւ անանց եւ անվախճան⁸: 20 Փութասցո՛ւք առանց յապաղելոյ, եւ մի՛ որ նման Յուդայի, որ յառաքելական դասուէն քակտեցաւ՝ նման նմա գտցի. որպէս եւ յայսմ գիշերի տեսէք, որք մեղ-

ա Սաղմ. ՃԺԵ 15

1 Ձ. Երուսաղէմ

2 ՏՏ. անուշահոտ

3 Ձ. գիշերոյն

4 ՏՏ. չիք եւ

5 Ձ. զհրեշտականման

6 ՏՏ. երանելոյն

7 ՁԱտ. զամենայն

8 Ձ. անվախճան